

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր թաւին 2 կոպեկ:

ՄԵԼԿ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ուսուցչական ընդհանուր ժողովներ.—ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դատաստանական գահի ծից. Նա-
մակ Ս. Պետերբուրգից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիֆլիսից. Արտա-
քին լուրեր.—ՀԵՌԱԳԻՆՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱ-
ՐԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲՈՆԱՍԻՐԱԿԱՆ. Պարիզից.

ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՐ ԺՈՂՈՎՆԵՐ

Ուսուցչական ընդհանուր ժողովներ կազ-
մելու խնդիրը մի հանրաձայնօթ խնդիր է
գերմանացիները, ուր մօտ երեսուն տարի է
արդէն, որ պարբերաբար ամեն տարի կազմ-
վում են ժողովրդական դպրոցների վարժա-
պետների ընդհանուր ժողովներ, քննելու
համար դպրոցական և մանկավարժական
պանդան կարևոր խնդիրներ:

Այդ ընդհանուր ժողովներում գերմա-
նական պետութեան զանազան կողմերից
հաւաքված բազմաթիւ ժողովրդական զույ-
րոցների ուսուցիչները՝ շփուկով միմեանց
հետ, քննարկաբար արծարծելով իրանց արտի-
մօտիկ խնդիրները, և ընդհանուր ոյժերով
աշխատելով այդ խնդիրների լուծման մա-
սին, կարողացել են շոշափել կերպով ա-
պացուցանել ուսուցչական ընդհա-
նուր ժողովների արդիւնաւոր լինելը և
մեծ նշանակութիւնը, քանի որ այդ տե-
սակ ընդհանուր ժողովներում տարիների
ընթացքում վճռվել են ոչ թէ միայն բուն
մանկավարժական նեղ խնդիրներ, այլ և
ընդհանրապէս կրթական այնպիսի լայն
հարցեր, որոնք կարողացել են մի ամբողջ
կերպարանափոխութիւն գցել գերմանական
ժողովրդական դպրոցների կազմակերպու-
թեան մէջ:

Գերմանական ուսուցչական ժողով ասե-
լով չը պէտք է հասկանալ մի այնպիսի

ժողով, որտեղ արծարծված հարցերը մի-
այն բուն գերմանական նշանակու-
թիւն ունեն, և չեն կարող հետաքրքրա-
կան լինել օտար երկրների դպրոցական
հարցերի տեսակէտից: Ընդհանուր ժողով-
մանական ուսուցչական ժողովների վերջին
տարիների արծարծած հարցերը այնպիսի
լայն և ընդհանուր նշանակութիւն ունե-
ցող հարցեր են, որ համարա թէ նոյն-
քան կարևոր և կենդանի նշանակութիւն
ունեն զանազան երկրներին՝ յայտնի աստի-
ճանի դարգացման վրա կանգնած դպրոցա-
կան աշխարհի համար, որքան և գերմա-
նիայի համար: Այժմ գերմանական ժողո-
վրդական դպրոցները վարժապետների ընդ-
հանուր ժողովներում այլ ևս չեն քննվում
դասադրելի, դասաւարտութեան և դիպա-
տական զանազան խնդիրներ, որոնք կազ-
մում էին նախորդ տարիների ընդհանուր
ժողովների պարագմունքի զլխաւոր մասը.
այժմ այդ և այդ տեսակ խնդիրները երկ-
րորդական տեղ են ստացել, և զրանց փո-
խարէն, վարժապետական ընդհանուր ժո-
ղովներում քննվում են դասաւարտական
ընդհանուր հարցեր, դպրոցների կազմա-
կերպութեան ծրագիրներ, ժողովրդական
արհեստագիտական ուսումնարանների խն-
դիրներ, և մանկավարժական այնպիսի
թէօրիաներ, որոնք ընդհանուր նշանակու-
թիւն կարող են ունենալ և օտար երկրների
համար:

Դպրոցական ասպարիզում և մանկավար-
ժութեան մէջ գերմանիայի այդպիսի դե-
կավարդ դեր կատարելը յայտնի իրողու-
թիւն է: Ամբողջ աշխարհը գիտէ, որ թէ
գերմանիան մի քանի բաներով կարող է
պարծենալ եւրոպական քաղաքակրթու-
թեան պատմութեան առաջ, որանցից մէկն
էլ դպրոցական խնդիրն է, որի համար
գերմանիան մեծ աշխատանք թափելով
նախանձելի հետեւներին է հասել: Եւ այ-

ժամ գերմանիան պարծենում է իր ժողո-
վրդական դպրոցներով, որոնք հաստա-
ված լինելով ամենայայտնի մանկավարժների
ստեղծած համակրելի մանկավարժական
տեսութիւնների վրա, և ցանցի նման պա-
տած լինելով ամբողջ գերմանիան, շատ
տարիներից է վեր կազմում են գերմանա-
կան պետութեան ոյժը, պարծանքը, և
նրա քաղաքակրթական զարգացման զլխա-
ւոր հիմքերից մէկը: Գերմանական դպրոցը
միշտ անխախտ է զարգացել, նա չէ եղել արկ-
վել ոչ կղերականութեան միակողմանի ուղ-
ղութեանը և ոչ էլ քաղաքական կողմնակի,
ժամանակաւոր դիտումներին: Այնտեղ զույ-
րոցը աշխատել է ծառայել միմյան ժո-
ղովրդին, աշխատել է ապրել և զործել
միմյան ժողովրդի համար, և հէնց այդ
պատճառով ժողովրդական դպրոցների դե-
կավարների ընդհանուր ժողովներում էլ
քննվել և քննվում են այդ նպատակին
ձգաող այդ համակրելի նպատակին ծա-
ռայող հարցեր:

Ուսուցչական այս տարվայ ընդհանուր
ժողովում, որը շատ բազմամարդ էր, և
որին բացի գերմանական վարժապետներից,
ներկայ էին շատ պատգամաւորներ աւստ-
րիական և շվեյցարական ժողովրդական
դպրոցներից, քննվեցան մի շարք կենդանի
հարցեր, որոնց մասին թէ բազմաթիւ
րեփերատներ են կարգացվել և թէ ջերմ
վիճաբանութիւններ եղել: Ժողովի ուշա-
դրութեան արժանացած հարցերից մէկը
կը յիշենք երկուսը: Կրանցից մէկը հետե-
ւեալն էր. «Հարկաւոր է արդեօք ժողով-
րդական դպրոցների մէջ մտնել արհեստե-
րի և ձեռագործութեան դասատուութիւնը»:
Պէտք է ասել, որ այդ կարևոր հարցը
վարդուց է արդէն, որ քննվում է գերմա-
նիայում և ունի շատ կողմնակիցներ զա-
նազան շրջաններում, որոնք պնդում են,
թէ ժամանակակից ժողովրդական դպրոցը

իր այժմեան կազմակերպութեամբ, չափից
զուրա յոգնեցնում է սաների օրգանիզմը,
միակողմանի կերպով զարգացնելով նրանց
մտաւոր ոյժերը միայն, և չը պատրաստե-
լով նրանց կենքի մէջ անհրաժեշտ զործ-
նական աշխատանքների համար: Այդ
հարցի մասին ուսուցչական ընդհանուր
ժողովը երկուսի բաժանվեց. մի մասը
կողմնակից էր վերեւ բերած ուղղութեան,
իսկ միւս մասը այն միտքն էր պաշտպա-
նում, որ այժմեան ժողովրդական դպրոցը
որքան կարող է պէտք է իր ջանքը թափի
սաների մտաւոր ընդունակութիւններն ա-
ճեցնելու, զարգացնելու վրա: Այս տարվայ
ժողովը մի որոշ վճռի չը յանգաւ այդ կա-
րևոր խնդրի մասին, որը հերթական հա-
ցերից մէկն է ոչ թէ գերմանիայում, այլ և
Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Աւստրիա-
յում, և որը մի քանի ժամանակից է վեր
սկսել է արծարծվել նոյն իսկ Ռուսաստա-
նում, և հայոց մամուլի մէջ:

Գերմանական վարժապետների այդ ժո-
ղովում յարուցած միւս հարցը, որի վրա
մենք ուզում ենք մասնաւոր անել, հե-
տեալն էր. «Ինչով կարող է դպրոցը նպաս-
տել սօցիալական հարցի լուծմանը»: Ինչ
կարծիք, որ դա մի կարևոր հարց է, որ
շոշափում է ժամանակակից կենքի բազ-
մաթիւ կողմերը: Եւ ահա գերմանա-
կան ժողովրդական դպրոցը փորձում է
մասնակցել այդ տեսակ մի հարցի լուծման
մէջ: Վերջիշեալ հարցի մասին զեկուցա-
նողները, մանրամասն քննութեան ենթարկե-
լով խնդիրը, առաջարկում են ժողովրդական
դպրոցը պարտաւորեցուցիչ դարձնել բո-
լոր դասակարգերի համար, որպէս զի դը-
րանով կարելի լինի մօտեցնել հարուստե-
րին և աղքատներին, կապել նրանց մի-
մեանց հետ, որով ինքը դպրոցը կը դառնայ
կրթական հիմնարկութիւն... Ինչ կասկած,
որ թէ նախորդ տարիներում և թէ այս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐԻԶԻՑ

XII

Այս անգամ ստիպված եմ ընդմիջել սովորա-
կան թղթակցութիւններս Պարիզի համաշխարհա-
յին ցուցահանդէսի և միջազգային կոնգրեսների
մասին, որպէս զի խոսեմ երեկվայ (յուլիսի 14-ի)
Ֆրանսիական ազգային տօնի մասին:

Յուլիսի 14 (մեր տոմարով 2) հանրապետու-
թեան տօնն է, այն ազգային Ֆրանսիական տօ-
նը, որը յիշեցնում է Ֆրանսիացուն իր ամբողջ
անցեալ փառաւոր պատմութիւնը, իր ազատու-
թեան ձեռք բերելը, յիշեցնում է նրան իր պատ-
մութեան ամենանշանաւոր գէպերը, որոնք նը-
պաստեցին ազատութեան ձեռք բերելուն: Այդ
օրը ամբողջ Պարիզ քաղաքը կերպարանափոխ-
վում է:

Նախընթաց օրից արդէն (չաբաթվանից) քա-
ղաքի տները, պալատները և խանութները՝ ըս-
կանցին դարդարվել ազգային դրօշակներով, իսկ
միւս օրը, կիրակի առաւօտեան, ամբողջ քաղա-
քը արդէն դարդարված է՝ դրօշակներով և գոյն-
զգոյն լապտերներով: Ամեն տեղ պատրաստու-
թիւն էին տեսնում երեկոյան համար, երբ ըս-
կվում է իսկական ժողովրդական տօնը: Ազգա-
յին դրօշակների թուով կային բազմաթիւ օտար-
յին դրօշակներ, մանաւանդ ամերիկական
դրօշակներ: Ամերիկացի այժմ սաստիկ բարեկամ
է Ֆրանսիային. այս օրերս Պարիզում, Սեն դեալի
ափին, ահագին բազմութեան, կառավարութեան
ներկայացուցիչների և իրան նախագահ կարնօի
ներկայութեամբ՝ կանգնեցրին Ամերիկայի «Ազա-
տութեան» արձանը, կատարելապէս նման այն
արձանին, որը զրկված է Նիւ-Եօրկ քաղաքի նա-

ւահանգստում, միայն աւելի փոքր դիրքով: Այդ
արձանը ընծայեցին Պարիզ քաղաքին՝ այստեղ
բնակվող ամերիկական կոնգրեսի անդամները:
Արձանի բացման հանդիսին ներկայ էր Պարիզի
ամերիկական դեսպանը, որը դիմելով կարնօին,
մի ճառ արտասանեց, յայտնելով որ կառուցված
արձանը նշան է այն փոխադարձ բարեկամու-
թեան, որը զոյգութիւն ունի աշխարհիս ամենա-
մեծ երկու հանրապետութիւնների մէջ և նմա-
նապէս նշան Ամերիկայի երաշխադրութեան
զգաւորները գէպի Ֆրանսիան, որը հարկւր տա-
րի առաջ նպատակեց հիւսիսային Ամերիկայի ա-
զատութեան, այդ ազատութեան համար իր զա-
ւակների արեւը թափելով և ուղարկած լինելով
այդ նպատակով Լաֆայետ գնեկարկին, որը և ե-
ղաւ Ամերիկայի ազատութեան գործի համար ա-
ռաջին մաքառողներից մին:

Երէկ, յուլիսի 14-ին, վաղ առաւօտանից մի
անսովոր տենդային շարժում էր նշանաւորում Ֆը-
րանսիական մայրաքաղաքում, ամեն տեղ լուսաւո-
րութեան, տօնախմբութեան համար պատրաս-
տութիւններ էին տեսնում, խանութների մեծ
մասը փակ էր, իսկ կէսօրին գրեթէ բոլորն էլ
փակվեցան: Երեկոյան, երբ լապտերները, դա-
ղային անթիւ բոցերը, էլէկտրական լապտերնե-
րը վառվեցան, Պարիզը մի անսովոր, տարօրի-
նակ, տարին մի անգամ միայն պատահող տեսա-
րան էր ներկայացնում: Պարիզ ճանաչողները դի-
տան որ այդ վիթխարի քաղաքը՝ զլխաւոր յատկութի-
ւունքից մէկը՝ նրա փողոցների ազդեցիկ, վառ, ա-
նընդհատ երթևեկութիւնն է... Առաւօտանից
մինչև ուշ դիշեր, Պարիզի ոչ թէ միայն առաջ-
նակարգ փողոցներում, բայց և երկրորդականնե-
րում՝ անթիւ անհամար մանաւոր կառքեր, ֆի-
ակներ, ահագին բեռներով բեռնաւորված սայ-
լեր, ձեռքը ոյժով մղվող փողոցի սայլեր, օմնի-
բուսներ, ձիաքաշ երկաթուղու ահագին վագոն-
ներ, այդ բոլորը անդադար դնում գալիս է,

միմեանց կողքով անցնելով, միմեանց հանդիպե-
լով, քիչ է մնում միմեանց ընդհարվելով, և լըց-
նելով օդը փողոցներում անընդհատաբար դուր-
վող հազարաւոր անխնդիր միակերպ, խուճայ-
նով: Սովորաբար կառքերի երթևեկութիւնը այն-
քան մեծ է լինում, որ այդ երթևեկութեան ար-
դէն ընտելացած Պարիզի բնակիչը շատ անգամ
հինգ, տասն րօպէ պէտք է կանգնի փողոցի տը-
րօտուարի վրա, մինչև որ յարմար րօպէ գտնի
փողոցի դիմացի տօտուարի վրա չտապով անց-
նելու, կառքերի անխնդիր և ձիերի օտնների տակ
չը մնաւու համար: Կառքերի երթևեկութիւնը,
մանաւանդ երեկոյան 7 ժամից յետոյ, այնքան
մեծ է լինում, մանաւանդ բուլվարներում, որ
շատ անգամ տասն րօպէ, քառորդ ժամ շարու-
նակ երթևեկութիւնը յանկարծ ընդհատվում է...
Կառքերը անշարժ կանգնած են մնում մի քա-
ռորդ ժամ շարունակ, մինչև որ կարողանան նո-
րից տեղից շարժվել...

Երբևէ երեկոյանից երեկոյանից կառքերի այդ հրէշաւոր
երթևեկութիւնն ունեցող Պարիզը՝ կատարելապէս
աղատ ամեն տեսակ կառքերից... Եւ իրաւ, այդ
տեսակ տարօրինակ տեսարան տեղի է ունենում
Պարիզում տարբէն մի անգամ, այն է յուլիսի
14-ի ազգային տօնի ժամանակ...

Երեկոյան ժամը 7-ից, կամ 8-ից սկսած, բո-
լոր ձիավարները, ուղեւաւով որպէս հանրապե-
տութեան քաղաքացիներ, նմանապէս մասնակցե-
լով ազգային տօնախմբութեան, տուն են տանում ի-
րանց կառքերը, հանդիստ են տալիս իրանց ձի-
երին և իրանց ընտանիքները հետն առած՝ խոսն-
վում են բազմաթիւ ամբոխի հետ, որը իր ներ-
կայութեամբ լցնում է բոլոր փողոցները, հրապա-
րակները, բուլվարները, կաֆէները և այլն...
Այս, տարօրինակ տեսարան, Պարիզ առանց
կառքերի, Պարիզի փողոցները լի միմյան հոտով
ման եկող հազարաւոր ամբոխով... Հազարաւոր
անխնդիր խուճ և անընդհատ աղմուկի փոխա-

նակ փողոցներում աղատ կերպով շրջող հազա-
րաւոր ամբոխի ուրախ ձայների անընդհատ,
պարզ աղաղակներ...

Վաղ առաւօտանից անձրև էր գալիս, բայց
չը նայած վատ եղանակին՝ բոլոր փողոցները,
մանաւանդ Place de la Concorde ասված անա-
ղին հրապարակը, Hotel de Ville-ի (քաղաքային
տուն) առջև գտնվող հրապարակը, և Բուօնաֆան
անտառն ու Լօնշան դաշտը՝ լի էին հազարաւոր
ամբոխով... Մեր, երեկոտարը, կին, աղջիկ, ե-
րեխայ, ամենքը շտապում էին մասնակցել ազ-
գային տօնախմբութեան: Հեռուից նայողի հա-
մար երևում էր բոլոր հրապարակների վրա ամ-
բոխի ծով և, անձրևակայներ ծով...

Առաւօտեան 9 ժամից սկսած Պարիզի զլխա-
ւորապէս երեք կենտրոններում էր խմբված ան-
թիւ ու անհամար բազմութիւն, Լօնշան դաշտի
վրա, որտեղ Պարիզում եղած գործի բոլոր գորա-
բաժինների գօրահանդէս պէտք է լինէր, Ho-
tel de Ville-ի հրապարակի վրա, որտեղ դիւո-
րական զոհատներ հազած մանուկների գօրա-
հանդէս պէտք է լինէր և վերջապէս Place de la
Concorde ասված հրապարակի վրա, որը Երեսնան
դաշտերից ոչ հեռու է գտնվում: Այդ հրապարա-
կի վրա կանգնեցած են բոլոր Ֆրանսիական
զլխաւոր քաղաքները՝ ներկայացնող հակա ար-
ձաններ, ի միջի այլոց և Ստրազբուրգ քաղաքի
արձանը: Սովորական օրերում էլ այդ վերջին
արձանը միշտ զարդարված է բազմաթիւ պսակ-
ներով և սզաւոր դրօշակով: Բայց մանաւանդ ե-
րեկվայ օրը այդ նոյն արձանը դարձաւ այլ և
այլ ցոյցերի առարկայ: Վաղ առաւօտանից ար-
ձանը շրջապատված էր ամբոխով. յանկարծ մօ-
տենում են արձանին կառքերի շարքեր և նրանց
միջից դուրս են գալիս Բուօնաֆան կուսակցու-
թեան մոլեռանդ հետևորդներ՝ Գլեուզէզ, Լազէր,
Բօրի, Սուլշեր և այլն... Նրանք մօտենում են
Ստրազբուրգի արձանին, դնում են նրա պատ-

անտառային ակադեմիան զիւղատնտեսական ակադեմիայի վերադիմելի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 18 յուլիսի Մեծ խնամ Կոնստանտին Նիկոլաևիչ յուլիսի 17-ի օր ու գիշերը հանգիստ անցկացրեց: Կաթնածային նշանները դէմքի և լեզուի վրա պակասեցան. շնչառութիւնը աւելի կանոնաւոր է:

ՎԻԵՆԱ. 18 յուլիսի Չերնոգորիական իշխանը թագաժառանգ Դանիէլի և Միլեցա և Անաստասիա իշխանուհիների հետ միասին ճանապարհ է ընկնում այստեղից դէպի Պետերբուրգ:

ՊԱՐԻԶ. 18 յուլիսի 813-ից Բուլանտէ 11 անգամ է ընտրված: Երէկ երեկոյեան Բուլանտէի լրագրիները խմբագրութիւնները չինութիւններին մօտ յուզմունք էր նկատվում: Սակայն ծանր անկարգութիւններ չհղան: Ոստիկանութիւնը հեռացրեց հասարակութիւնը «Օպերա» հրապարակից և «Կապուցիներ» թուղթից, որի ժամանակ կալանաւորվեցան մօտ 40 մարդիկ, որոնք չէին կամենում հեռանալ: Վարչութիւնը անգլիկ ճշմունք է գործ դնում. զինուորական ընդարձակ միջոցներ են ձեռք առնվում: Երէկ երեկոյեան Պարիզի փողոցներում թափառում էին գաղտնի պոլիցիայի 1500 ագենտներ: «Presse» լրագրի գրասենեակում կատարված խուզարկութեան ժամանակ գտել են Լօնդոն ուղարկվելիք նամակներ:

ՊԱՐԻԶ. 18 յուլիսի: Յայտնի են 1257 ընտրութիւնների հետևանքները: Բուլանտէ ընտրված է 12 կանտոններում. Դերուէլէ ընտրված է Անգուլէմում 2000 ձայների մեծամասնութեամբ:

ՊԱՐԻԶ. 18 յուլիսի: Կրիտիկի նահանգապետը յետ է կանչված: Վեց հոգուց բաղկացած մի յանձնաժողով դնում է Կ. Պօլիս բանակցելու Բ. Դրան հետ ցանկալի զինվորների մասին:

ԼՕՆԴՈՆ. 18 յուլիսի: Համայնքների ժողովը 355 ձայների մեծամասնութեամբ 134-ի դէմ ընդունեց կառավարութեան առաջարկութիւնը՝ թափառական ընտանիքի օգնելու աւելացնելու մասին, մերժելով ազատամիտ Մօրլէի բողոքը: Պար-

սից շահը իր հրաժեշտը տուեց «Թագուհու» Օկտրօնում և այսօր երեկոյեան ճանապարհ ընկաւ դէպի Պարիզ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յուլիսի 18-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արծէ—	96 ր. 80 >
Բերլինի վրա 100 մարկ —	47 > 30 >
Փարիզի վրա 100 ֆրանկ —	38 > 37 >
Ռուկի — արծէ —	7 > 74 >
Մարսայի կուպոններ —	154 > 50 >
Արծաթ —	1 > 13 >
Բորսայի զիւլոններ —	55/8 > 70/0 >
Պետակ. բանկ. 50/0 տոմս 1-ին շրջանի	98 > 75 >
— — — — — 2-րդ —	99 > — >
— — — — — 3-րդ —	98 > 62 >
— — — — — 4-րդ —	98 > 87 >
— — — — — 5-րդ —	98 > 62 >
— — — — — 6-րդ —	99 > — >
Լոթ 40/0 — — — — —	83 > — >
Արեւելեան 50/0 փոխառութ. 1-ին շրջ.	98 > 75 >
— — — — — 2-րդ —	98 > 75 >
— — — — — 3-րդ —	98 > 50 >
Եւրոպ. 50/0 առաջին փոխառութ.	264 > 75 >
— — — — — երկրորդ —	245 > 75 >
51/2% րէնտա — — — — —	103 > — >
Ռուկայ րէնտա — — — — —	172 > — >
Եօթերորդ կօնսօլիդ. փոխառ. —	141 > — >
Լոթ երկաթուղային րէնտա —	98 > 87 >
50/0 գրաւական թղթեր կալուած.	— > — >
— — — — — փոխ. կրեդ. ընկ. մետ. —	137 > 75 >
— — — — — թղթադ. —	92 > 25 >
Գրաւ. թղ. Անլ. բանկի — — —	98 > 75 >
Գրաւական բանկի — — — — —	103 > — >
60/0 գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43 տ.	— > — >
— — — — — — Բուլանտէ—18 և 43 տ.	— > — >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրին.	— > — >
— — — — — քաղաքային —	94 > 62 >
Մօսկվայի քաղաք. օրին. քաղաքային —	93 > 75 >
Օդեսայի — — — — —	94 > — >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օր. —	— > — >
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը	— > — >
ամուր է:	— > — >

Ժամանակաւոր խմբագիր Յ. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՅ
Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱԶԴ.

Ազգային երկսեռ վարժարանաց տնօրէնութեան և ուսուցչութեան պաշտօնը զոհացուցիչ թշուառ կարող ազգայնոց մը յանձնելու փափաքաւ, ուսումնական խորհրդարան կը խնդրէ որ այն պաշտօնին յարմար և զայն ստանձնել փափաքող ազգայինը հաճին յատուկ նամակաւ դիմել իրեն և յայտնել իրենց պայմանները: Խնդրուած պաշտօնեայն պարտ է լինել վարժ դաստիարակ, հմուտ հայերէնի և մի եւրօպական լեզուի, ինչպէս նաև ինչ-ինչ կարեւոր ուսմանց և գիտութեանց:

Կարողական. նոր շրջանը սեպտեմբերի 1/13-էն կը սկսի, հետեւեալը ամեն առաջարկը պարտին լինել ընդ փոյթ:

Նամակը պիտի ուղղուին առ ուսումնական խորհուրդ, առաջնորդարան հայոց ի Զմիւռնիա:

Ուսումնական խորհուրդ:

1—5

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՕՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԻ ՀՍՄԱՁԱՅՆ, տրանսլ հրաւիրում եմ Թիֆլիսի Զորաբաշի Ս. Գեորգի եկեղեցւոյ մեծապատիւ ծխական-ժողովուրդներին շնորհ բերել նոյն եկեղեցի, ԿԻՐԱԿԻ, ՅՈՒԼԻՍԻ 23-ԻՆ, ԱՌԱՒՈՏԵԱՆ ԺԱՄԸ 10-ԻՆ կատարելու ԶՈՐԱԲԱՇԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԵՑՓՈԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ս. պատարագից յետոյ:

Վերատեսուչ բարեկարգութեան եկեղեցեաց Հայոց Հաւաքարի՝ Աշոտ քահանայ Թէմուրազեանց:

1—1

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՅ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր

ԱՌԱՒՈՏՆԵՐԸ

ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆԻՔԻՇԿ ԻՍՍՀԱԿԵԱՆՅ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԻՆԿՎՍԿԻ—11—12 ժ. անկաշի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի (վիրաբուժ. և ատամնաբ.)
ԱՐՏԵՄԻՆԿՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.
ԿՕՐԱՊԵՏԵԱՆՅ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱԴՈՄՍԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՎԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էկկտրօտերապիա):
ԲԵՆԿԻՆԿՎՍԿԻ—7—8 ժամ.
Հիւանդանոցում են մանկաբարձուհիք՝ Երևանցեան և Արտազեան:
Վճար—50 կ. Համախորհրդի (կոմիտէի) համար փոխադարձ համաձայնութեամբ:

Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՐՈՒԴԿՈՎՍԿԻ

ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԴԻԿ

Առաջ ՀափաՀասաների Համար

ԳԵՈՐԳ. ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆՅԻ:

Վաճառվում է Կենտրոնական գրավաճառանոցում:

Գինն է 60 ԿՕՊ.

5—10

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԵԼԻԻՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱՌԻ ԴԷՄ

ՊՕՐՈՒՆԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՎ ԿԱԹՈՒՆԵՐ 50 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀԵՍ.

ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կովկասեան զեղա-վաճառատան, և պ. պ. Շահ-պարտեանցի, Մակկէրի, Սէնչի-կովսկու և Ագմուրովի զեղա-տներում: ԲԱԳՈՒԻ մէջ, Բէկկէրի մօտ, ԲՈՒԹԱՑԻՍՈՒՄ՝ Կօկօշկի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻՄ՝ Բրօննօցիու մօտ և ԵԿԱՅԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ՝



22—52 (Հ.)

Լոյս տեսաւ

Յ Ե Յ Ե Ր

Վէպ

աշխատութիւն Պերճ Պաշկանի:

Մտնվում է Թիֆլիսի գրավաճառանոցներում:

Գինն է 1 ռուբլի:

3—5

ԵՐԵՎԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Հրաւիրում է երկու բարձրագոյն կրթութիւն ստացած ուսուցիչ ուսուցչ լեզուի, ընդհանուր պատմութեան և ընդհանուր աշխարհագրութեան դասերի համար, և երկու հմուտ մանկավարժ երկրորդ նախակրթարանի երկու զուգընթացների համար: Առաջինների վարձատրութիւնը պայմանաւոր է, իսկ երկրորդներինը հինգ հարիւրական ռուբլի: Ցանկացողները, ներկայացնելով իրանց ուսումնական վկայագրերը, թող դիմեն զպրանոցի տեսչին հետեւեալ հասցեով՝ Эривань, Доктору Арутюнянцу.

7—8

1822 թ. Երևանից գոյութիւն ունեցող և 20 մեդալների ու պատուաւոր զիւլոնների արձանագած

ԱՊԱԿԵՐԷՆԻ, ԲԻՐԵՎԻ ԵՒ ՊԱՏՈՒՀԱՆԻ ԱՊԱԿԵՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

1865 թ. 26 թիւ 1882 թ.

ԻԴՆԱՏԻ ԴՈՐԴԼԻԶԱՆ ՓԻՐՄԱՅ

որի պահանջները գտնվում են ՎԱՐՇԱՎԱ, Сенаторская, № 19 и Граничная, № 6 ԼԻԻԲԻՆ, 102 և ԲՐԵՍԼ-ԼԻՏՎԱԿ քաղաքներում:

Առաջարկում է իր պատրաստած իրեղեններ, այսինքն ամեն տեսակի հարթ և ողորկ ապակիներ, նոյնպէս և զօհարաման և բլրեղանման ապակիներ, սեղանի պիտոյքներ, ծաղկամաններ, սրուակներ, զեղավաճառատան անօթներ, լամպայի պիտոյքներ և լուսամուտի ապակիներ, որ պատրաստում են բնիկական և ֆրանսիական եղանակով:

ԲՈՒՐՈՐ ԵՒ ՄԱՏՁԵԼԻ ԳՆԵՐՈՎ:

4—4 (Հ.)

ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

ՄՕԼՏԻՖԱՏՈՒՄ (Կօրօիկա կղզի) և ՎԻԳԱՆՈՒՄ (Գար)

ՇԵՐԱՄ ԶԷԼԼԻԿԷՐ ԱՅՐՄԵՐ (ՊԱՍՏԵՐԻՄՍՏԵՄ)

BERTRAND ET ALOISI

Médaille d'Or 1re Classe
Sartène (Corse) 1878.

Médaille d'Or 1re Classe
Sartène (Corse) 1878.

Médaille d'Or 1re Classe
Montpellier 1885.

Médaille d'Or 1re Classe
Montpellier 1885.

ԴԵՂԻՆ ԵՒ ՍՊԻՏԱԿ ԿՕԿՕՆԵՐ

Bertrand et Aloisi սերբերը գտնու համար դիմել Թիֆլիսի շերամապահական կայարանը, սկսած 1889 թ. 1 հոկտեմբեր ամսից:

2—10